ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Անգլերեն
(առարկա)

ԹԵՄԱ՝ <<ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ>>

Կազմեց՝ Նելա Հարությունյան Կամոյի
(անուն, ազգանուն, հայրանուն)

Դավիթ Բեկի միջն. դպրոՊՈԱԿ
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Թագուհի Ղոնյան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....2
Ներածություն.....3
ԳԼՈՒԽ 1 «ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»

1.1 Ուսուցչի մասնագիտական բարձր որակների և կոմպետենտության նշանակությունը սովորողների առաջադիմության բարձրացման վրա.....5

1.2Սովորողի հաջողության հասնելու մոտիվացիայի առանձնահատկություններն ու ուսուցչի կողմից դրան ուղղված գործունեությունը հանրակրթական դպրոցում.....10

Գլուխ <<Ամփոփում>>.....11

Եզրակացություններ.....17
Օգտագործված գրականության ցանկ.....18
1.4Հավելվածներ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նոր աշխարհի առաջընթացի աննախադեպ աճը, բարձր տեխնոլոգիաների համատարած կիրառումը էապես դիպչում է նաև կրթական համակարգին: Կրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով բարեփոխվում ու արդիականացվում է, ուստի ուսուցիչը պետք է հասցնի քայլել ժամանակին համընթաց, ձեռք բերի համապատասխան կարողություններ, որպեսզի շարունակի կատարել կրթելու ու դաստիարակելու իր գործառույթն արդյունավետ:

Միջազգային փորձը վկայում է, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտների սովորելու ցանկությունը խթանող կրթության բովանդակություն: Եթե կրթական համակարգը չունենա բարձրակարգ մանկավարժական կազմ, որակյալ ուսումնական բովանդակություն, ժամանակակից մեթոդական զինանոց, ապա նոր մտածողություն ունեցող սովորողն իր կրթական պահանջմունքները բավարարելու է դպրոցից դուրս, իսկ վերջինս դառնալու է ձևական և անարդյունավետ հաստատություն:
Ինչպես գիտենք, արդի կրթական համակարգը սահմանում է նոր կարողությունների համակարգ թե՛ սովորողների, թե՛ դասավանդողների համար: Հարկ է նշել, որ ոչ միայն դասավանդողները պետք է զինվեն համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով, կրթական նորարարություններով, այլև գնալով փոխվում է նաև սովորողի դերակատարումը: Գիտելիքների հաղորդմանը զուգահեռ՝ սովորողը պետք է դառնա հետազոտող, ստեղծարար, ունենա քննադատական ու պատկերավոր մտածողություն, կարողանա սեփական դիրքորոշումն անկաշկանդ արտահայտել: Բարփոխումների ֆոնին՝ վերարժևորվել են նաև բոլոր ուսումնական առարկաների դասավանդման նպատակներն ու վերջնարդյունքները, իսկ այդ ճանապարհին գործընկերների հետ համագործակցումը, օրինակելի փորձի փոխանակում, ինքնակրթությունը, պարտադիր վերապատրաստումները մեծապես կարող են օգնել ուսուցչին:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ կոլեկտիվ աշխատանքը, որպես նորարար հանդես գալու մղումները ուսուցչի համար այն ազդակներն են, որոնք կարող են ուղիղ ազդեցություն ունենալ կրթության որակի բարձրացման և սովորողներին դեպի դպրոց բերելու, նրանց առաջադիմությունն ապահովելու հույժ կարևոր

գործընթացների վրա: Այս համատեքստում անգլերենի ուսուցիչը նույնպես բավականաչափ անելիք ունի, քանի որ լեզուների իմացությունը ևս կրթական համակարգի պահանջ է: Ուստի և օտար լեզու դասավանդող ուսուցիչը ևս պետք է փորձի հետաքրքրել սովորողին, մոտիվացնի ու շահագրգռի վերջինիս:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է ուսուցչի գործառույթների ու մանկավարժական որակների նոր պահանջների կարևորությամբ, որոնք կարող են իրենց դրական ազդեցությունը բերել հանրակրթական ուսումնական հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացի առաջընթացի վրա:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել կարողունակ ու հմուտ ուսուցչի դերը կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետ պլանավորման ու իրականացման, ինչպես նաև սովորողների սովորելու մոտիվացիայի ու առաջադիմության բարձրացման վրա:

Հետազոտության խնդիրը:

1. Ցույց տալ ուսուցիչների համագործակցության անհրաժեշտությունը կրթության որակի բարձրացման վրա:
2. Մատնանշել ուսուցչի ստեղծագործ ու նորարար լինելու հանգամանքը սովորողների սովորելու մոտիվացիայի բարձրացման տեսանկյունից:
3. Շեշտադրել ուսուցչի մասնագիտական աճի հնարավոր եղանակները մեթոդմիավորումների իրականացրած աշխատանքների շրջանակներում:

ԳԼՈՒԽ 1 «ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»

1.1 Ուսուցչի մասնագիտական բարձր որակների և կոմպետենտության նշանակությունը սովորողների առաջադիմության բարձրացման վրա

Ուսումնական գործընթացի արդիականացումն ու սովորողների առաջադիմությունը մեծապես կախված է ուսուցչի մասնագիտական ու մարդկային որակներից: Անչափ կարևոր ենք համարում վերջինիս մասնագիտական պատրաստվածությունը նորորարական գործիքների ու մեթոդների կիրառման առումով: Կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Ստացվում է, որ ուսուցիչն իր մարդկային ու մասնագիտական բարձր որակներով, ժամանակակից մեթոդների կիրառությամբ, սովորողի տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարող է հասնել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջարդյունքների դրական ելքերին: Ուստի և սովորողի հաջողությունը այս համատեքստում ուղիղ համեմատական է ուսուցչի մասնագիտական և անձնային որակներին, քանզի այս պարագայում վերջինս ոչ միայն սովորեցնողի դերում է, այլ նաև համակարգողի ուղղորդողի, խորհրդատուի: Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության, առաջադիմության, սովորելու մոտիվացիայի խթանումը պայմանավորված է ուսուցչի հմուտ ու նորարար լինելուց: Միևնույն ժամանակ կարևոր է, որ ուսման նկատմամբ սերն ու հետաքրքրությունը չպարտադրվի, այլ դասի պլանավորման հետաքրքիր ու կառուցողական մոտեցումներ օգնեն, որ սովորողն ինքնուրույն գա այդ եզրահանգմանը: Այդ արդյունքը մեծապես կախված է ուսուցչի մանկավարժական ու անձնային որակներից, սովորողների հետ հարաբերվելու հմտություններից: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

Ուսուցչի մասնագիտական որակներն են՝

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն;
- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն;

- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն;
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն;
- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն:
- կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն [1]:

Ուսուցչի անձնային որակներն են՝

- սերը երեխաների նկատմամբ , համբերություն, օբյեկտիվություն, անարդարության նկատմամբ անհանդուրժողականություն;
- քաղաքացիական օրինապաշտություն, քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները զուգորդելու գիտակցություն , հարգանք երեխայի ազատության և իրավունքների նկատմամբ ու դրանք պաշտպանելու պատրաստակամություն և կարողություն;
- մշտապես ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ զբաղվելու գիտակցություն և մասնագիտական ու ընդհանուր զարգացումը պլանավորելու և իրականացնելու կարողություն[2]:

Կրթական համակարգի բարեփոխումների ներկա փուլում առաջնահերթ խնդիրը կրթության որակի ապահովումն է, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծումը, որտեղ սովորողը կարող է անցնցում ձեռք բերել իմացական ու գործառական գիտելիքներ: Այս համատեքստում այսօր ընդունված է նախապատվություն տալ աշակերտակենտրոն ուսուցմանը, որտեղ սովորողը ուսումնական գործընթացում ունի ավելի ակտիվ դերակատարում: Այդ դերը կենտրոնացնելու, սովորողին ինքնուրույն գործելու և նախաձեռնողի դերում հանդես գալու համար լայն հնարավորություններ են ստեղծում ուսուցման փոխգործուն

[1] Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», էջ 13:

[2] Նույն տեղում, էջ14:

մեթոդների կիրառումը դասապրոցեսի ժամանակ, որոնք համապատասխանում են աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներին և արդյունավետ են: Սովորողների առաջադիմության վրա ուղիղ ազդող մի միջոց էլ հետադարձ կապն է, որն ուսուցչի ձեռքում իսկական գործիք է սովորողին խրախուսելու, պասիվ դաշտից ակտիվ դաշտ բերելու և մոտիվացնելու համար: Սովորողների առաջադիմության մշտադիտարկումը ուսուցչին թույլ կտա արձանագրել դրական դինամիկան: Հարկավոր է անընդհատ խրախուսել և աջակցել սովորողներին, ինչը նաև մեծ մոտիվացիայի աղբյուր է: Միևնույն ժամանակ հարկավոր է սովորողին տալ կոնկրետ ուղղություններ, թե ինչպես կատարելագործվել, կուտակել կայուն գիտելիք: Սա ավելի նախընտրելի է, քան ուղղակի սխալների ու բացթողումների մատնանշումը: Կարևոր է սովորողների կողմից կրթության կարևորության գնահատումը: Հետադարձ կապը մեծապես կարող է օգնել սովորողին, գիտակցելով ուսումնական գործընթացում հաջողություններ գրանցելու կարևորությունը, հստակ ռազմավարություն մշակել ավելի լավ սովորելու համար:

Ուսուցիչն անընդհատ պետք է վերանայի իր մանկավարժական կենսափորձը: Նոր տեխնոլոգիական գործիքները, դասի բազմաբնույթ ձևերն ու տեսակները, մեթոդների բազմազանությունն առաջին հայացքից կարող են ուսուցչի աշխատանքային գործընթացում ստեղծել խառնաշփոթ՝ դրանց ճիշտ ընտրության ու կիրառության առումով, սակայն ուսուցիչը պետք է գիտակցաբար մոտենա նորարարություններին, փորձի դրանք ընկալել ոչ թե ավելորդ պարտադրանք, ժամանակատար գործընթաց, այլ յուրաքանչյուր նորարարական գաղափարի մեջ փնտրի, գտնի այն հետաքրքիր կետը, որից պետք է սկսի իր ինքնազարգացումը: Անշուշտ, նորարար ուսուցչի հետաքրքիր գաղափարները՝ այդ թվում հենց հետադարձ կապի կիրառությունը, միտված են մեկ նպատակի՝ սովորողին տալ հանրակրթական ծրագրերին համապատասխան գիտելիք և կարողունակություններ: Այս առումով շատ կարևոր են մանկավարժական գործունեության մեջ նրա մղումներն ու ձգտումները:

Ուսուցիչը պետք է քաջ գիտակցի իր պաշտոնային պարտականությունները, իսկ մեթոդների և ուսուցման ձևերի ընտրության առումով նա միանգամայն ազատ է:

Մանկավարժական աշխատողը պարտավոր է՝

1) հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը.

2) նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները.

3) նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը.

4) ապահովել հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ[3]:

Իսկ թե որչափ արդյունավետ կհամադրվեն նորագույն տեխնոլոգիաներն ու մեխանիզմները ուսումնական գործընթացի ժամանակ, կախված է ուսուցչից և վերջինիս աշխատանքը վերահսկող խորհրդակցական մարմիններից: Այս առումով շատ կարևոր է մանկավարժական փորձի փոխանակումը: Ուսուցիչների միջև աշխատանքային համագործակցության բարձր մակարդակը ևս նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետ զարգացմանը: Հետևաբար, ուսուցիչները պետք է բաց լինեն գործընկերների հետ կառուցողական համագործակցային հարաբերություններ հաստատելու համար: Մանկավարժական աշխատողն իրավունք ունի համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով[4]:

Ուսուցիչը, համագործակցելով մեթոդմիավորման մյուս անդամների հետ, կուտակում է նոր գիտելիքներ, հմտություններ, իր առջև դնում մի շարք իրավիճակային խնդիրներ ու փորձում լուծումներ գտնել: Հարակից առարկաների հիմունքների իմացությունը նույնպես ուսուցչի համար պարտադիր է, քանի որ սովորողների հայացքների, համոզմունքների, ընդհանրապես աշխարհայացքի ձևավորումը նաև իրականացվում է միջառարկայական կապերի միջոցով[5]: Մանկավարժական այս օղակի գործունեության հենքում մանկավարժական

---

[3] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ1-4:

[4] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀհանրակրթության մասին օրենք

[5] http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf Յու. Ամիրջանյան, Ս. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2005, էջ 84:

որակների բարձրացումն է, որն ուղղակի կերպով պայմանավորում է ուսումնական գործընթացում կրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ի կատար ածումը, ուստի կարելի է պնդել, որ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է իր օրինակով խրախուսել մյուսին՝ ի նպաստ կրթական համակարգի բարելավման և ուսումնական գործընթացի անցնցում իրականացման:

Շատ կարևոր է ուսուցիչը փորձի հանդես գալ որպես նորարար: Դիտարկենք մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ խմբերին:

Առաջին խումբ՝ նորարարներն են, որ մշտապես ձգտում են նորի իրագործմանը:

Երկրորդ խումբ՝ նորամուծությունների վաղ իրականացնողներն են, որ անմիջապես գնում են նորարարների հետևից, բայց նրանցից տարբերվում են ցածր ռիսկի աստիճանով և հանդես են գալիս որպես խորհրդականներ:

Երրորդ խումբ՝ յուրացնում են նորամուծությունները անմիջապես վաղ իրականացնողների հետ, բայց հազվադեպ են հանդես գալիս առաջնորդի դերում:

Չորրորդ խումբ՝ նորամուծություններն ուշ իրականացնող մեծամասնությունն է, որին հատուկ է սկեպտիցիզմը, նորամուծությունները յուրացնում են որպես միջին սուբյեկտ՝ իրենց պահանջմունքների գնահատման արդյունքում:

Հինգերորդ խումբ՝ կազմում են տատանվողները, որոնք ամենավերջինն են յուրացնում նորամուծությունը, նրանց հատուկ է բավական կայուն վերաբերմունքը[6]:

Ուսուցիչը չպետք է բավարարվի բացառապես իր ակադեմիական գիտելիքների պաշարով: Մեթոդական գիտելիքները, սովորողների հետ հարաբերվելու հմտությունները, հետաքրքիր դասեր պլանավորելու ունակություններն անկյունաքարային նշանակություն ունեն կրթական համակարգի արդիականացման, սովորողների կոմպետենտ ու աշխատունակ դառնալու առումով, ուստի խրախուսելի ենք համարում ուսուցիչների ձգտող, նորարար ու պայքարող տեսակը, պայքար՝ հանուն մտածող, հետազոտող, նախագծող, կարծիք ու դիրքորոշում հայտնեող սերունդ դաստիարակելու համար:

[6] Լ. Ասատրյան, Մ. Ասատրյան, Ն. Սաֆարյան, «Դպրոցի կառավարման հիմունքները», ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2018:

1.2 Սովորողի հաջողության հասնելու մոտիվացիայի առանձնահատկություններն ու ուսուցչի կողմից դրան ուղղված գործունեությունը հանրակրթական դպրոցում

Մոտիվացիան անհատի կառուցվածքի անբաժանելի մասն է և հոգեբանական շարժիչ ուժը, որը թույլ չի տալիս կորցնել անհատի ակտիվ գործունեությունը որոշակի նպատակի հասնելու ժամանակ:

Սովորողին մոտիվացնելու, դեպի դպրոց նրա հետաքրքրություններն ուղղելու պատասխանատու գործընթացը, որը հիմնականում դրված է ուսուցչի վրա: Ուսուցման նկատմամբ անտարբերությունը հատկապես նկատելի է դառնում դեռահասության տարիքում: Դեռահասությունը մանկության և հասունության միջև օնտոգենետիկական զարգացման շրջանն է, որը բնութագրվում և հատկանշվում է որակական փոփոխություններով՝ կապված սեռական հասունացման և «մեծահասակների աշարհ» մուտք գործելու հետ: Այս շրջանում անձն ունենում է բարձրացված դյուրագրգիռ իմպուլսիվություն, որի հիման վրա էլ հաճախ ձևավորվում են անգիտակցական սեռական հակումները: Դեռահասության տարիքի հոգեբանական կարևորագույն բնութագիրը անձնավորության ինտենսիվ բարոյական ձևավորումն է, բարոյական գիտակցության ձևավորումը, վարքի բարոյաէթիկական նորմերի տիրապետումը: Այս տարիքում տեղի է ունենում ոչ միայն ֆիզիկական հասունացում, այլ նաև անձնավորության ակնառու հասունացում, որն իրականացվում է շրջատատող իրականության ազդեցությունների ուղեկցությամբ, դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի պրոցեսում[7]:

Նորագույն տեխնոլոգիաներով հեղեղված այս ժամանակաշրջանում մանկավարժի գործառույթներից ամենակարևորը թերևս սովորողին դեպի կրթություն շահագրգռելը, մոտիվացնելը, խոսուն ու գործնական օրինակներով կրթության դերն ու նշանակությունը կարևորելը, վերջինիս մոտ ինքնուրույնության, նախաձեռնողական ու ստեղծագործական ունակությունների ձևավորելն է: Հենց այդ նպատակներից է բխում ուսուցչի կողմից նորագույն մեթոդներին, զանազան տեխնոլոգիական նորարարություններին դիմելն ու տարրբեր տիպի ու նշանակության դասեր իրականացնելը: Բուն գիտելիքի հաղորդմանը զուգահեռ անչափ կարևոր է այդ գիտելիքի իրացումը գործնականում: Այստեղ կարևոր են

[7] https://www.academia.edu/10964884 Ա Սևումյան, «Դեռահասության տարիքում ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունները»:

տեսական գիտելիքների գործնական կիրառման հնարավորությունները սովորողների համար: Պակաս կարևոր չէ սովորողի ստեղծագործական մտածողության զարգացումն ու առհասարակ վերջինիս ստեղծագործականությունն ընդհանրապես: Ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է:

Կրթության արդիականացման գործընթացի հիմնական նպատակն է ունենալ ինքնուրույն, նախաձեռնող ու նորարար սովորող: Մանկավարժական գործունեության մեջ հաջողելու համար կարևոր է ուսուցչի կողմից սովորողին խրախուսելը՝ պատվոգրեր, շնորհակալագրեր, բարձր գնահատականներ, հաճախ ստիպում են սովորողին վերանայել սեփական վարքը, վերարժևորել իր ուսումնառության գործընթացն ու ավելի մոտիվացված առաջ գնալ:

Կարևոր հանգամանք է նաև սովորողին վերահսկել համացանցային հարթակում: Հաճախ համացանցը կարող է իր լաբիրինթում գերի պահել դեռահասին: Ուսուցիչը պետք է համացանցը ճիշտ օգտագործելու համար՝սովորողներին ուղղորդի նախագծերի կամ սոցիալական աշխատանքների ստեղծման ուղղությամբ, որոնք ներբեռնելով համացանց՝ կհամախմբեն այլ մարդկանց՝ դրական նպատակների և գործողությունների իրականացման համար[8]:

Այսպիսով, ուսուցիչն է կրթության ճարտարապետը, նա պետք է համակարգի, ուղղորդի, ցույց տա գիտելիքի ուժը, այնուամենայնիվ կրթական համակարգի շինարարները հենց սովորողներն են: Երկուստեք կառուցողական մոտեցումները թույլ կտան կառուցել ամուր ու անսասան կրթական համակարգ:

Գլուխ. Սեփական հետազոտություն

Մեր մանկավարժական պրակտիկայիում հաճախակի ենք դիմում հարցումների օգնությանը, որպեսզի ապահովենք հետադարձ կապ: Պարզելու համար սովորողների նախասիրությունները, դասից նրանց ակնկալիքները, սովորողների վերաբերմունքը ուսուցչի և դասընկերների հետ համագործակցությանը 10-րդ դասարանում համագործակցային մեթոդական համակարգով պլանավորված դասից հետո սովորողներին տվեցինք հարցաթերթեր հետևյալ բովանդակությամբ:

Հարցաթերթ 1

[8] https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան:

Դասարան՝ 10-րդ

Սովորողների քանակ՝ 10

Հարցման նպատակները՝

- Պարզել սովորողների վերաբերմունքը ուսուցչի կողմից դասի պլանավորման նկատմամբ:
- Պարզել սովորողի ակնկալիքները դասից:
- Բացահայտել սովորողի դժվարությունները:
- Ուսումնասիրել սովորողների վերաբերմունքը դասընկերների հետ համագործակցային աշխատանքին վերաբերյալ:
- Հասկանալ սովորողի վերաբերմունքը ուսուցչի հանդեպ:

1. Այսօրվա դասը հետաքրքի՞ր էր քեզ համար, ի՞նչ նոր բան սովորեցիր:	
2. Խմբային աշխատանքի ժամանակ օգնեցի՞ր ընկերներիդ կամ օգնություն խնդրեցի՞ր:	
3. Կա՞ ինչ-որ անհասկանալի բան, որ խանգարեց քեզ դասը խորքային ընկալել:	
4. Կարծում ես ուսուցիչը բավարա՞ր չափով ուշադրություն դարձրեց քեզ:	
5. Ի՞նչն էր քեզ պակասում դասին:	
6. Արդյոք դասին բարոյահոգեբանական միջավայրը բարենպաստ էր քեզ համար:	

Այսպիսով, ամփոփելով հարցման արդյունքները՝ արձանագրեցինք, որ սովորողների գերակշիռ մասը մեծ ոգևորությամբ է ընդունում դասընկերների հետ համագործակցությունը, խմբային աշխատանքերի ժամանակ թիմում աշխատելու, հանուն մեկ նպատակի առաջ գնալու հնարավորությունը: Արձանագրեցինք նաև, որ հարցվածներից 6 սովորող դասին ունեցել են դժվարություններ անգլերենով

հաղորդակցվելու, տեքստային աշխատանք կատարելու ժամանակ: Իսկ ահա խմբային աշխատանքի ընթացքում դասընկերների օգնությամբ ավելի հաճույքով ու առանց դժվարությունների են մասնակցել առաջադրանքին: Բոլոր սովորողները միաբերան փաստել են, որ դասարանում բարոյահոգեբանական միջավայրը կառուցողական է, զերծ որևէ հուզական բռնությունից կամ կաշկանդող հանգամանքներից: Ուսուցչի և սովորողների համագործակցությունը, համաձայն սովորողների մեծամասնության կարծիքի, նույնպես կարելի է համարել հաջողված: Հարցին,թե ի՞նչն էր պակասում դասին, սովորողներից 4-ը մատնանշել են տեխնոլոգիաների ամենօրյա կիրառումը, իսկ 2 սովորող այն կարծիքին է, որ անգլերենի դասաժամերը պետք է ավելի շատացնել, որպեսզի իրենք կարիք չունենան արտադասարանական պարապունքների:

Այսպիսով, նմանօրինակ հարցաթերթերը ուսուցչին հնարավորություն են տալիս մշտադիտարկել սովորողների ցանկություններն ու կարծիքները, հետադարձ կապի մեխանիզմների միջոցով սովորողների համար ապահովել ինքնանդրադարձ կատարելու հնարավորություն, ինչնէլ իր հերթին կարող է նպաստել խնդիրների վերհանմանն ու լուծմանը:

Հարցաթերթ 2

Դասարան՝ 9րդ

Սովորողների քանակ՝ 8

Հարցման նպատակը՝

- Պարզել դասավանդող ուսուցիչների մասին աշակերտների ունեցած կարծիքը և ուսուցիչների վերաբերմունքը աշակերտների նկատմամբ :

	Հարցեր	Դասավանդող ուսուցիչներ			
		Անգլերեն	Ռուսերեն	Պատմություն	Հայոց լեզու
1	Ինչպե՞ս կվարվի ուսուցիչը, եթե աշակերտը դասին պատրաստ չէ:	Կհարցնի պատճառը և կբացատրի, որ չի կարելի անպատրաստ ներկայանալ	Կհարցնի պատճառը և կփորձի օգնել:	Նրա համար միևնույն է:	Կզայրանա, բայց կների:

		դասի:			
2	Ինչպե՞ս կվարվի ուսուցիչը, եթե աշակերտը դասին լավ է պատրաստված:	Կուրախանա և բարձր կգնահատի:	Կասի, որ դա աշակերտի պարտականությունն է:	Օրինակ կբերի ծույլերի համար:	Բարձր կգնահատի, բայց չի ոգևորի:
3	Ինչպե՞ս կվարվեիր դու ուսուցչի փոխարեն նշված երկու դեպքերում:	Ոչինչ չէի անի, ամեն մեկն իր համար է սովորում:	Կօգնեի՝հաղթահարելու դժվարությունները:	Հարկ եղած դեպքում լրացուցիչ օգնություն կցուցաբերեի:	Կուրախանայի և կոգևորեի:

Ամփոփելով հարցման արդյունքները՝ հնարավորություն ստացա պարզելու հումանիտար առարկաների ուսուցիչների մասին աշակերտների կարծիքը և ուսուցիչների վերաբերմունքը աշակերտների նկատմամբ՝ հաշվի առնելով նրանց ընդունակությունները: Որպես նաև հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ կատարեցի անհրաժեշտ դասալսումներ ստուգելու, թե որքանով են օբյեկտիվ աշակերտների կարծիքները և համապատասխանում իրականությանը:

Հարցաթերթ 3

Դասարան՝11-րդ

Սովորողների քանակ՝ 4

Հարցման նպատակները՝

- Դասը տեսնել աշակերտի աչքերով :
- Ինչպես է աշակերտը գնահատում իր ուսուցիչներին(0-5 միավորով):

	Հաղորդակցման վարպետության հատկանիշները	Առարկաներ			
		Հայոց լեզու	Ռուսաց լեզու	Անգլերեն	Պատմություն
1	Հետաքրքիր է ներկայացնում նյութը:	4	3	4	3
2	Համբերատար է ներկայացնում դասը:	3	4	4	2
3	Մատչելի ձևով է մատուցում նյութը:	5	5	5	4
4	Կարողանում է հետաքրքրություն առաջացնել դեպի իր առարկան:	4	3	4	2
5	Առաջարկում է ստեղծագործական ինքնուրույն աշխատանքներ:	3	2	2	2
6	Կազմակերպում է խմբային աշխատանքներ:	3	3	3	4
7	Անաչառորեն է գնահատում յուրաքանչյուր աշակերտի գիտելիքները և հնարավորությունները:	4	4	4	4
8	Հավասարապես է վերաբերվում բոլոր աշակերտներին:	5	5	5	4
9	Միավորների գումարը:	31	29	31	25


31մ
31մ
25մ
29մ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով սույն հետազոտության մեջ ուսումնասիրված թեմայի նպատակն ու դրանից բխող խնդիրները՝ կատարեցինք հետևյալ եզրահանգումները՝

- Ինքնուրույնության, նախաձեռնողականության բարձրացման ֆոնին դպրոցական ծրագրով նախատեսված ուսումնական առարկաները սովորողների համար կդառնան մատչելի, կիրառելի ու հետաքրքիր:
- Մոտիվացիան առհասարակ կյանքի բոլոր ոլորտների համար պարտադիր բաղադրիչ է, ուստի սովորողը պետք է ունենա բոլոր հնարավորությունները դպրոցում անընդհատ մոտիվացվելու դեպի ուսումը, իսկ ուսուցչի ուղիղ ներգործությունն այստեղ անխուսափելի է:
- Սովորողի ինքնուրույն գործելու դրսևորումները դպրոցում մեծապես պայմանավորված են թե' սովորողի անձնական մղումներից, թե' ուսուցչի մասնագիտական ու անձնային որակներից:
- Ուսուցիչների ջանքերը, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքին, միշտ էլ արդարացված են: Դրա վառ ապացույցը սովորողների զանազան նվաճումներն ու ձեռքբերումներն են: Իսկ արգասաբեր գործելու համար ուսուցիչը պետք է կանոնակարգի ու համակարգի իր աշխատանքը՝ անդադար քայլելով նոր մտքերի, կարողությունների, հմտությունների ու տեխնոլոգիաների հետևից:
- Կոլեկտիվ մոտեցումը հնարավոր հիմնախնդիրներին հնարավորություն է տալիս ուսուցչին ավելի մոտիվացվել, ուսումնասիրել ոլորտում առկա խնդիրներն ու նորությունները, կիսվել սեփական փորձով, սովորել ու սովորեցնել՝ նպատակ ունենալով ապահովել արդի կրթական համակարգի սահմանած պահանջներն ուսուցչից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»:
2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
3. http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf Յու. Ամիրջանյան, Ս. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2005:
4. Լ. Ասատրյան, Մ. Ասատրյան, Ն. Սաֆարյան, «Դպրոցի կառավարման հիմունքները», ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2018:
5. Ա Սևումյան, «Դեռահասության տարիքում ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունները»:
6. https://old-lib.armedu.am/resource/27157 Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹԵՍՏ

Սովորողների վերաբերմունքը ուսուցչին

1.Նշի'ր 3 քեզ հայտնի ուսուցիչների, որոնց դու համարում ես լավագույնը: Նշի'ր նրանց անվան սկզբնատառերը և սեռը:

2. Նշի'ր 3 ուսուցիչների, ովքեր քեզ համար գրավիչ չեն: Նշի'ր նրանց անվան սկզբնատառերը և սեռը:

3. Նշի'ր 3 ուսուցիչների, որոնց համարում ես ամենաօժանդակող, հասարակ և չեզոք, նաև չտարբերվող: Նշի'ր անվան սկզբնատառերն ու սեռը:

4. Նշի'ր 3 հատկանիշ,որոնք օգնում են քեզ «ընդհանուր լեզու» գտնել ուսուցիչների հետ:

5.Նշի'ր 3 հատկանիշ, որոնք խոչնդոտում են քեզ անմիջական շփում հաստատել ուսուցիչների հետ:

6. Նշի'ր 3 հատկանիշ, որը ինչպես դու ես մտածում պետք է քո մեջ ձևավորել, որպեսզի կարողանաս հեշտությամբ շփվել ուսուցիչների հետ:

7. Նշի'ր քո այն 3 հատկանիշները, որոնցից դու կցանկանայիր ազատվել, քանի որ դրանք խանգարում են ուսուցիչների հետ շփման ընթացքում: